ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

28.02.2019
341-66

ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի
իրավաբանական անձանց պետական ռեգիստրի
գործակալության պետ Արմեն Առաքելյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Առաքելյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոն է դիմել քաղաքացի Սիլվա Բալայանը և խնդրել աջակցել իրեն տեղեկություն ստանալու հարցում:

Սիլվա Բալայանը «ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ապահովման վարչություն» հիմնարկի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար 2018 թվականին կատարել է սահմանված չափի վճարումը և դիմել իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստր: Սակայն նրան տրամադրել են միայն այն տեղեկությունները, որոնք կարելի է ստանալ անվճար՝ այցելելով իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստրի պաշտոնական կայք:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք տրամադրել «ՀՀ ադարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ապահովման վարչություն» հիմնարկի մասին տեղեկությունների ամբողջական փաթեթը, որը տնօրինում է ձեր կառույցը՝ ներառելով ամբողջական տեղեկատվություն հիմնադրի, գործունեության ոլորտի և գործառույթների վերաբերյալ:

Կից ներկայացնում ենք քաղաքացու կողմից արված վճարման անդորրագիրը:

Հարգանքով՝

ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան